



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱԳԱՐ-
ԺԱԿԱՆ ԾՆ ԱԶԳԱՅԻՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Թ. ՅԵ. Գ. Ի Թ. Տ Ա Ր Ի.

Հ Ա Մ Ա Ր Ե Ա Մ Ն Ե Բ Ո Ր Գ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1895 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ

«Քաջալերեցարուք, նա եմ,
մի՛ երկնւնք»:

Մատթ. ծ. Գ. 27:

Մուսլ զիշերոյ միրկածուփ ամեհի ծոփ
փրփրադէզ ալիքներին խաղալիկ դար-
ձած մի խեղճ նաւ, և Մարդոյ Արդին որ
անվրդով քայլում է անդունդի վերայ—ինչ
հրաշալի պատկեր երկնային արուեստիւ-
գծած՝ ինչքան խորհրդաւոր: Յիսուս ջը-
րերի վերայ... «Նա իջնում է սրբութեան սա-
րից, ուր ամբողջ ժամեր աղօթքի և առանձ-
նութեան մէջ էր անցրել իւր Հօր հետ, և
նորա աստուածային անեղ հոգին ազատ եթե-
րի մէջ է սաւառնում զեռ: Նորա երկնակոխ

մաքուր ոտքերին մեղաւոր տարրը հպել չի
համարձակուում: երկնքի ու երկրի մէջտեղն
է ման գալիս Նա և Իւր կենսաօրիթ յու-
սաղրող ձայնով վերակենդանութիւն ներշնչում
տագնապալից, ընկղմելու մօտ հոգիներին.
«Քաջալերեցարուք, ես եմ, մի՛ երկնչիք»:

Ե՛ս եմ. . . . Նրբ մեղքի պատրանքը
փոթորիկ է հանում մեր մէջ և զգայական
ցանկութիւնները կոհակ կոհակ բարձրանում
զիզուում են՝ խեղդել աշխատում մեր ներ-
քին, բարոյական կենդանութեան սաղմերը.
Երբ չար բաղդը մեզ հալածում է, անդեկ՝ ան-
առաջատ նաւի պէս խութից խութ, ան-
զունդից անզունդ ձգում, փորձանքի ու

խեղճութեան ժայռի դէմ մեր զոյւթիւնն ամէն բողբէ խորտակել սպառնում—ի՞նչ աւելի ապահով նեցուկի աւելի յուսատու մի հանդամանք մեզ համար քան այն զգացումը թէ մօտ է Վա որի արարչական ձայնին և՛ ծով և՛ հողմ հնազանդ են որ քայլում է և առիւծարար մանչող կատաղի ալիքները մի վայրկեանում լռում կծկուում խոնարհ գանձուկների նման Վորա ոտներին են փարում որ անսխալ ղեկավար է և խաղաղ նաւահանգիստ միանգամայն Արձանի կ զգացումն . . . և երբ մէկն այդ զգացմամբ տողորուած, տողորուած իւր Տիրոջ և Փրկչի մօտ լինելու, Վորա շաղկով ընթանալու բուռն ցանկութեամբ արհամարհում է ամէն ինչ արհամարհում բնութեան օրէնքը և համարձակում ոտքը անդունդի վերայ դնել . . . այստեղ ևս յոյսը նորան չէ խարում նա ստեղծ է արդարև առաջին բողբէին երբ շուրջն է նայում հողմ ու մրրիկ և մոլեգին յորձանքներ տեսնում իւր զիմաց, երբ լոյծ ու մեղկ տարրը սահում է ոտքի տակից և դէպ իրեն ձգում նորան հողանիւթ զանգուածը բայց բաւական է որ աչքը կրկին դէպի Փրկիչը դարձնէ՝ դէպի ալիքների վերայ շրջող Յիսուս, և բացականչի ի խորոց սրտի. «Տէր, փրկեա՛ զիս», և ահա մեկնում է Վա իւր ազատարար ձեռքը, ոտքի կանգնեցնում ընկզմեպին և ալիքների վերայ շրջել սովորեցնում:

Այ՛ս անհուն մխիթարութեան և խրախուօյշ յուսոյ աղբիւր է ամէն քրիստոնէի ամէն մի տազնապալից հոգու համար ս. աւետարանի այս հատուածը, ծովի և փոթորկի վերայ իշխող Տիրոջ այս հրաշալի պատկերը բայց այսօր օրհասական այս պահուն այդ մխիթարութեանն ու խրախուսին ամէնից աւելի պէտք ունին Հայաստանեայց ս. եկեղեցու վասնդեալ նաւի բնակիչները: Աւա՛ղ, քանի դար արդէն այդ նաւը մեկնեալ է ի ցամաքէն թազում՝ ասպարիսօք՝ ծփեալ յալեացն քանի՞ սաստիկութեամբ նորա դէմն են շնչում այժմ հակառակ հողմեր, հողմեր մարդկային վայրենի կրքի, եսական չար դիտումների հեզ-

նութեան դառն ծիծաղի ու պատանեկան անմիտ ցնորքների. և նաւի վերայ եղողները յուսահատ այս կողմ՝ այն կողմ են ընկնում նա յում են անհանդիստ դէպի արևելք, դէպի արևմուտք, արդեօք կ յայտնուի՞ մի ամբակուռ նաւատորմից փրկելու նոցա վերահաս վասնդից արդեօք մօտ է ցամաքը և կդանուի մէկը որ այդ քայքայեալ անգիկ անպաշտպան նաւը խոչ ու խուժերի միջով դէպի այնտեղ առաջնորդէ:

Անդանի է սակայն նաւի իսկական Տէրը իսպառ բացակայել Վա չէ կարող և դաւիս է ահա յաղթական ընթացքով խռովայող ալիքների վերայ. առաջօք մի երևոյթ չէ դա այլ նոյն ինքն Պրիգորի մեծ Ատուածը, «Քաջալերեցարձք, ես եմ մի երկնչիք», ձայնում է Վա ամէնքին և մեղմութեամբ յանդիմանում նոցա որոնք ջրասոյլ ընկղմելու վտանգի մէջ են համարում իրենց. «Թերահաւատ, ընդէ՛ր երկմտեցեր»:

«Ի նեղութեան իմում ես առ Տէր կարգացի և Վա լուաւ ինձ յանդորր»:

«Տէր է իմ օգնական, և ես ո՛չ երկեայց զի՛ արասցէ ինձ մարդ»:

«Վարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ յիշխանաս»:

Կ. Վ.



Ա.Գ.ՕԹՒԲԸ ՏՐՏԻՈՒԹԻՒՆ ՓԱՐԱՏԵԼՈՒ ԴԵ՛Ղ, Է՛.

«Եւ էր ի տազնապ եւ մտադերութեամբ եւս կայր յառօթս . . . Զուկ. ԻԲ. 45:

Խորհրդաւոր ընթրիքից յետոյ երբ վերջին աղօթքը կարգացուեցաւ Տէրն և իւր առաքեալներն որոնց մէջը չէր միայն չարաբողոք մատնիչը, դուրս ելան քաղաքի դռներից և Կեղբանի ձորն իջնելով զիմեցին դէպի Չիթենեաց պարտիզի կամոջ զառիվայր, որ նորա ետեի կողմն էր գտնուում: Համդիսուոր և խնոր էր նոցա այս փերջին միտքան գնացքը. խորհրդաւոր երկիւղի ծանր վիշտը կապարի նման ծանրացել էր այդ մի բուռն խեղճ գալիլեացիների սրտի վերայ երբ